

որդւոյն՝ Սահակին եւ զազտագողի փախուստի դիմէ դէպի Եւրոպա :

1626ին, երբ Մելքիսեղեկ Լեհաստան կը գտնուէր եւ կը համբաւէր, թէ արդէն կաթողիկէ Եկեղեցւոյ հետ ի միութեան կը գտնուի, տեղւոյն առաքելական Նուիրակին հարցման կը պատասխանէր Ս. Ժողովը 1 Օգոստոս եւ 19 Սեպտ. թղթերով²⁶, թէ այդ միութիւնը կերպապէս դեռ տեղի չէ ունեցած. եւ կը հրահանգէր Նուիրակը, որ օգտագործելով կաթողիկոսին «միտութիւնն դէպի կաթողիկէ Եկեղեցի» աշխատի իրազործել միութիւնը, Եւզինիոս Դ.ի սահմանած հրահանգներու համաձայն : Մինչ այս վախճանեցաւ Մելքիսեղեկ ի Կամենից, 1627, Մարտ 18ին :

34. ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՂԵՐՍԸ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԵՏ

Անշուշտ ծանօթ էր Մովսէս այն թղթակցութիւններուն, որոնք կը փոխանակուէին Մելքիսեղեկ կաթողիկոսի եւ Հռոմայ Աթոռին միջեւ : Ինքն ալ ուզեց պահպանել կապ Ս. Աթոռին հետ :

1612ին, երբ Չաքարիա Վանեցի Հռոմէն կը վերադառնար Կ. Պոլիս քահանայապետական թղթերով եւ ընծաներով, որոնք պիտի յանձնուէին Մելքիսեղեկ կաթողիկոսին, նոյն քաղաքին մէջ էր Մովսէս : Տեսաւ եւ լսեց այն վէճերը, որոնք ծագեցան Չաքարիայի եւ Գրի-

²⁶ Propaganda, Lettere C. S., 1626, t. 5, f. 168 եւ 202.